

«Նշխարի սղգային պատմութեան մականգրին ներքեւ Երուսաղէմի գրչագիրները շատ աւելի նիւթ կրնային մատակարարել քան որչափ ինչ օգտուած է Սաւալանեան, իսկ իւր յաջորդները զայն բռնաւ իսկ դանց բրած են, որ պատմական ուսումնասիրութեանց համար շատ պիտանի գլուխ մըն է:

«Երուսաղէմի աթոռին պատմական յիշատակներուն և ժամանակակից զիջուածներուն ալ մեծ ուշադրութիւն դարձուած է. բայց այս զիտողութիւններով մէկտեղ առաւելագոյն օգուտին տեսակէտը պէտք է մղէ մինչև եղածը ուրանալու:

«Ուր էր թէ Երուսաղէմ այսօր ալ ունենար իւր Սիոն ամառադիրը. գոնէ պարագայք ներէին Նոր Սիոն մը հրատարակել»: 1916 ՅՈՒԼԻՍ 25/7 ՕԿՈՍՏՈՍ. ԲԾ.

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

Ս. ԱՐԹՈՒՍ ՏՕՆԸ ԵՐՈՒՍԱԳԼԷՄ ԵՒ Կ.ՊՈԼԻՍ. —

Ս. ՊԱՏՐԻԱՐԺԻՆ ՀԻՆԱՆՈՒԹԻՒՆԸ. —

ՄՆՈՒՆԻՒՄ ՏՕՆԸ ԲՆԹՂԵՀԷՄԻ ՄԷՋ

«Աւագ Տօներ մասնաւոր շահեկանութիւն մը ունին Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան համար, որովհետեւ Արքոյ Յակոբեանց Առաքելական Սթոնին և Հայոց Պատրիարքութեան հաստատութեան դարողարձի տնտեսութիւններն են ատոնք:

Այս տարի շատ շքեղութեամբ խմբրեցան Աւագ Տօներ Արքոյ Յակոբեանց պատրիարքական եկեղեցւոյ մէջ: Ամեն. Տ. Տ. Եղիշէ Ս. Պատրիարք Հայրը, նախագահեց Աւագ Տօներու առաջին մասին հանդիսութեանց: Ըստ աւանդական սովորութեան, Տեառն եղբայր Յակոբոս Արքար կոչուած Առաքելի տօնին առտուն, ելաւ Յակոբ Առաքելի տնուան հաստատուած Սթոնը, բնդունեցաւ Միաբանութեան շնորհաւորութիւնները արջամարդով, և յետոյ Պատրիարքարանի սրահին մէջ՝ կրկնուեցան շնորհաւորութիւններ Միաբանութեան և ժողովուրդի կողմէն:

«Ս. Ստեփանոսի տօնը շատ փայլուն անցաւ: Անդլիաշի հայաւէր Վեր. Հ. Պրքերին և Ժանց Վրժնի. Անդլիերէնի ուսուցիչ Վեր. Հ. Պրիմէն ներկայ էին Ստեփանոսի տօնին առաւօտեան հանդէսին: Մետասան Աւագ Մարկիապաններ և երեք ուրարակիրներ, սարկիապի ճօն պատմուհաններով զգեստաւոր, սպասաւորեցին և ներկայացան Ս. Պատրիարքին եկեղեցւոյ

մէջ: Ս. Յակոբայ յատուկ այս սարկիապատօնը խոր տպաւորութիւն բրաւ ժողովուրդի և մանաւանդ հիւր եկեղեցականներու վրայ:

«Դժբախտաբար Միաբանութեան և ժողովուրդին հոգեւոր խրախճանքը արդատութեան փոխարկուեցաւ մեր Սիրելի և Սերբազան Պատրիարքին շանթաւորիչ հիւանդութեամբը, որ զգեալեց Նորին Ամեն. Արքայնութիւնը Յունիար Ծ, կիրակի օր, այնպէս որ չկարողացաւ նախագահել Աւագ Տօներու մնացած մասին և պատարագել Յակոբ Դիսապիր Առաքելոյն տօնին օրը և միսթարել Միաբանութիւնն ու ժողովուրդը: Հանգիստալիք եղաւ Պարքին. փոխանորդ Մկրտիչ Եպս. Որդոց Որոտման տօնի հանգչեաներուն և պատարագեց:

Ս. Պատրիարքը ծանր տաղանդներ անցուց, բայց փառք Աստուծոյ, երբ Սիոնի երկրորդ թիւին այս վերջին երեսը կը արպագրուի, Ն. Ամեն. Արքայնութեան վիճակը բարւոյցած է յուսալից կերպով և մեր տրտմութիւնը փարատած:

«Կ. Պոլսն, Երուսաղէմի Պարքին. փոխանորդ Գեր. Սմբատ Եպս. կողմէն Ս. Պատրիարք Հօր ուղղուած նամակէն կ'իմանանք թէ Կ. Պոլսի Մայր Եկեղեցւոյն մէջ աւանդական հանդիսաւորութեամբ տեղի ունեցած է Ս. Աթոռիս հաստատութեան տօնադարձը Տեառնեղբոր տօնին առթիւ: Եկեղեցւոյ մէջ համախմբուած են ուրիշ եկեղեցիներու քահանայ հայրերը և զպրիները, և արարողութեանց նախագահած է փոխանորդ Սմբատ Արքազան, և յետոյ Փոխանորդարանի յարկարաժինին մէջ տեղի ունեցած է պաշտօնական բնդունելութիւն և ճաշկերոյթ, ջերմ շնորհաւորութիւններով և սրտազին բարեմագթանքներով Ս. Աթոռիս հաստատութեան և տեսանութեան և Ամեն. Ս. Պատրիարք Հօր արեւշատութեան և Միաբանութեան բարօրութեան համար:

«Մենդեան Տօնն ալ (հին տոմարով) կատարեալ էանոնաւորութեամբ կատարուեցաւ Բեթղէհէմի Մայր Եկեղեցին Մարտի ալիւն մէջ: Օղբ մեղմ էր և կը շրջեցնէր Աւետարանի նկարագրած աղուր գիշերը, ուր բացօթեալ հովիտներ տեսան Աստուծոյ փառքը, լսեցին հրէշտակներուն աւետան ու փառարանութիւնը ու վազեցին Բեթղէհէմ և տեսան նորածին Մանուկը: Այս տարի Մրնունի տօնախմբութեանց հանգիստալետն էր ելեւմտից տեսուչ Մատթէոս Արքազան, որ մատոյց Ս. Պատարագը Այրին մէջ և աւուր պատշաճի քարոզով միսթարեց բարեպաշտ և ուխտաւոր ժողովուրդը, որ բազմութեամբ փութացած էր Բեթղէհէմ: